ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 21-Ա

<<27>> փետրվարի 2025 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ԱՐՏՅՈՄ ԱՐՏԱԿԻ ԴԱՎԹՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդված 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 39-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման տեղեկանքը, տրված՝ 2023-11--16 ծածկագիր՝ 2023CCUVS7, հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունն իրականացրած քաղաքացի Արտյոմ Արտակի Դավթյանը, իր 2023 թվականի նոյեմբերի 16-ի դիմումով ընդունել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և Անի համայնքի սեփականությունը համարված 41,54 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի նշանակության ավտոտնակի շինությունը և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-003-0026-0254 կադաստրային ծածկագրով 0,00415 հեկտար մակերեսով հողամասի (Վկայական 1612024-08-0045, անշարժ գույքի հասցեն՝ մարզ Շիրակի, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Արկադի Տեր-Թադևոսյան փողոց 20/4 ավտոտնակ) ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին
որոշում է

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, տալ համաձայնություն՝ օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված 41,54 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի նշանակության ավտոտնակի շինությունը և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի

համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-003-0026-0254 կադաստրային ծածկագրով 0,00415 հեկտար հեկտար մակերեսով հողամասը (Վկայական 1612024-08-0045, անշարժ գույքի հասցեն՝ մարզ Շիրակի, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Արկադի Տեր-Թադևոսյան փողոց 20/4 ավտոտնակ) գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով 75572 (յոթանասունհինգ հազար հինգ հարյուր յոթանասուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ ընդհանուր արժեքով վաճառել կառուցապատողին, քաղաքացի՝ Արտյոմ Արտակի Դավթյանին /Նույնականացման քարտ՝ 4101870373, տրված՝ 31.10.2017թ, 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, ք. Մարալիկ, Ձերժինսի փողոց շենք 20, բն. 17):

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա. Սարիբեկյանին.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը՝ քաղաքացու միջոցներով:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ՝ 12	դեմ՝ 0	ձեռնպահ՝ 0
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	----------	----------	----------
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ	----------	----------	----------
Ա. ՇԱԲՈՅԱՆ	----------	----------	----------
Հ. ՋԱՏԻԿՅԱՆ	----------	----------	----------
Ժ. ԱԼԵՔՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Ն. ՍԱՐՈՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ	----------	----------	----------
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ	----------	----------	----------
Մ. ԱՍԼԱՆՅԱՆ	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<27>> փետրվարի 2025 թ.
քաղաք Մարալիկ